2015 թվականի մարտի 14-ին, Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցու նստավայրում կայացավ Վրաստանի հայերեն ուսուցմամբ հանրային դպրոցների ղեկավարների հանդիպումը Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի հետ: Հանդիպմանը մասնակցում էին Մառնեուլի շրջանի Միրզոևկա, Չանախչի, Շահումյանի թիվ մեկ և թիվ 3 , Բոլնիսի շրջանի Բոլնիս-Խաչենի և Կիանեթի, Թեթրիծղարոյի շրջանի Սամշվիլդեի, ինչպես նաև քաղաքամայր Թբիլիսիի թիվ 103 և 104 հանրային դպրոցների տնօրենները և ուսմասվարները: Հանդիպմանը ներկա էր նաև Վիրահայոց թեմի կրթության բաժնի տնօրեն Եվգենյա Մարկոսյանը:

Ողջունելով ներկաներին, Թեմական առաջնորդը հետաքրքրվեց մայրաքաղաքում և հայաբնակ վայրերում հայերեն ուսուցմամբ դպրոցներում աշակերտության թվաքանակի, դասագրքերի, ծրագրերի, առարկայական մասնագետներով ապահովության և այլ հարցերով:

Հանդիպմանը ներկա ղեկավարներից յուրաքանչյուրը ներկայացրեց իր ղեկավարած

կրթօջախում ուսումնա-դաստիարակչական աշխատանքների դրվածքը, խոսեց դասագրքերի, ծրագրերի շուրջ, արժևորեց կրթության բնագավառի նկատմամբ ցուցաբերվող ուշադրությունը ինչպես Վրաստանի, այնպես էլ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունների և ռեսուրս-կենտրոնների կողմից:

Ամփոփելով հանդիպումը, Թեմակալ առաջնորդը աշխատանքների բարելավման և կատարելագործման լծակ անվանեց ամեն տարի ՀՀ Կրթության և գիտության և Սփյուռքի նախարարությունների կողմից կազմակերպվող վերապատրաստման դասընթացները և հորդորեց ներկաներին անպայման իրենց ղեկավարած կրթօջախների ուսուցիչներին մասնակից դարձնել այդ դասընթացներին, որոնք նպաստում են ժամանակի ոգուն համահունչ սերունդ դաստիարակելուն: Սրբազան հայրը անդրադարձ կատարեց Հայոց Ցեղասպանության զոհերի հիշատակին Մայր Հայրենիքում և Սփյուռքում անցկացվող միջոցառումներին և կրթօջախների ղեկավարներին առաջարկեց իրենց դպրոցներում անցկացնել ոգեկոչման տարբեր միջոցառումներ:

Վազգեն Սրբազանը պատրաստակամություն հայտնեց սերունդների կրթության և դաստիարակության ասպարեզում առկա խնդիրները լուծելու գործում: